ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

Աբովյան համայնքի կարիքների համար անվտանգ երթևեկության ապահովման սխեմայի պատրաստման աշխատանքների ձեռքբերման նպատակով «ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-22/33» ծածկագրով գնանշման հարցումով կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Աբովյան

10/08/2022թ.
ժամը 15:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Զոբանյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Զիտչյան, Լ. Իսահակյան, Գ. Խաչատրյան, Լ. Շառաջյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Զոհրաբյան

1. Տվյալներ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկների մասին
(Ա. Զոբանյան)

1.1 Ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

ՀՀ դրամ

Հ/հ	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Նախահաշվային գին
Աբովյան համայնքի կարիքների համար անվտանգ երթևեկության ապահովման սխեմայի պատրաստման աշխատանքների ձեռքբերում					
1	«ԱՍԿԵՏ 16» ՍՊԸ	5 000 000	1 000 000	6 000 000	12 000 000
2	«ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ	8 400 000	1 680 000	10 080 000	
3	«Պռոլաբ» ՍՊԸ	9 000 000	1 800 000	10 800 000	

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:
*Առաջարկված գինը մասնակիցների կողմից www.armeps.am կայքի միջոցով ներկայացված գինն է:

2. Բացված հայտերում պահանջվող/պարտադիր/ փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին
(Ա. Զոբանյան)

Ընդունել ի գիտություն, որ մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր /պարտադիր/ փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ.

ա) «ԱՍԿԵՏ 16» ՍՊԸ-ի կողմից իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ հավելված 1.3-ը ներկայացվել է թերի՝ հավելվածի 4.7.2 կետում կատարված չէ համապատասխան նշում:
բ) «ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի կողմից իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ հավելված 1.3-ը ներկայացվել է թերի՝ հավելվածի 4.5 ա կետում կատարված չէ համապատասխան նշում:
գ) «Պռոլաբ» ՍՊԸ-ի կողմից իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ հավելված 1.3-ը ներկայացվել է թերի՝ հավելվածի 4.5 ա կետում կատարված չէ համապատասխան նշում:
Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝
«ԱՍԿԵՏ 16» ՍՊԸ-ին, «ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ին և «Պռոլաբ» ՍՊԸ-ին ուղարկել ծանուցում՝ օրենքով սահմանված ժամկետում /10.08.2022թ. ներառյալ/ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:
Ընդունել ի գիտություն, որ «ԱՍԿԵՏ 16» ՍՊԸ-ն, «ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ն և «Պռոլաբ» ՍՊԸ-ն օրենքով սահմանված ժամկետում /10.08.2022թ. ներառյալ/ շտկել են արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

3. Գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Զոբանյան)

3.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-22/33» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվում «ԱՍԿԵՏ 16» ՍՊԸ-ն:
3.2 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Հանձնաժողովի նախագահ՝		Ա. Զոբանյան
Անդամներ՝		Ս. Չիտչյան
		Լ. Իսահակյան
		Գ. Խաչատրյան
		Լ. Շառաջյան
Համակարգող		Տ. Զոհրաբյան